



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<07>> *Երևան* 2024թ.

ՆՄՈ/205-26

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ  
ԱՊՐԻԼԻ 14-Ի ՆՄՈ/282 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով.

որոշում եմ՝

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2022 թվականի ապրիլի 14-ի  
«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում արտակարգ իրավիճակների  
հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները  
գնահատող նոր հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կազմը և աշխատակարգը  
հաստատելու մասին» ՆՄՈ/282 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝  
1) Որոշման N1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:



2024-05-07 10:02:37 GMT+4  
Հավաստված է էԿԵՆԳ-ի կողմից

ՄԱՐԶՊԵՏ՝

Դ. ԽՈՒՂԱԹՅԱՆ

Հավելված  
Հայաստանի Հանրապետության  
Արմավիրի մարզպետի  
2024 թվականի մայիսի 07 -ի  
ՄՍՈ/205-Ա որոշման

«Հավելված N1  
Հայաստանի Հանրապետության  
Արմավիրի մարզպետի  
2022 թվականի ապրիլի 14-ի  
ՄՍՈ/282 որոշման

### Կազմ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում արտակարգ  
իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց  
պատճառված վնասների գնահատող նոր հանձնաժողովի

#### Հանձնաժողովի նախագահ՝

Խ. Մկրտչյան՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ.

#### Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝

Գ. Հովհաննիսյան՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի  
աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման  
հարցերի վարչության պետ.

#### Հանձնաժողովի քարտուղար՝

Դ. Դավթյան՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի  
աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և  
հասարակայնության հետ կապերի վարչության պետ.

## **Անդամներ՝**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչությունից 2 մասնագետներ.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչությունից 2 մասնագետներ.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությունից 2 մասնագետներ.

Առողջապահական համակարգից 1 վնասվածքաբան, 1 վարակաբան.

Անասնաբուժական ծառայությունից 1անասնաբույժ.

«Ոռոգում ջրառ» ՓԲԸ-ից 1 մասնագետ.

Արմավիրի գազաֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղից 1 մասնագետ.

ՀԷՅ ՓԲԸ «Մուսալեռ» մ/ճ Արմավիրի էլցանցից 1 մասնագետ.


«Վիոլա ջուր» ՓԲԸ-ից 1 մասնագետ.

Մարզային փրկարարական վարչությունից 2 մասնագետ.

Մարզի հակահրդեհային տեսչությունից 1 մասնագետ:»:

**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝**

**Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

 Недействительная подпись

*Xi... (Handwritten signature)*

VERIFIED OCSP 07.05.2024 09:44:21 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

